

րեմուտս զանուող կողմէ և Շէհիաներ լերան հիւսիսային կողերէն, մի ժամ ճանապարհորդելէ ետք կը թողու Քաղաձուխ գիւղ ձախ կողմ, 4 ժամ ընթանալով $\frac{1}{2}$ ժամ Ռէկիրման գիւղի արեւմուտքէն անց ներով կը խառնուի $\frac{5}{4}$ ժամ յարեւելս Ղազուղայի խառնուրդէն ¹:

Յօգ-Թէփէ լեռան հիւսիսային արեւելեան և հիւսիսային կողերէ երկու ձորեր կը յառաջանան մին Սըշրք արեւելահիւսիս ընթանալով կը կազմէ կապուտայ մեծ ջուրն, երկրորդ ի յարեմուտս հիւսիս գնալով Մատուռայ ձորն, այս երկու ջրոց ընթացքի մէջ Յօգ-Թեփէ լեռնէ մի թեւ կը ձգուի ի հիւսիս, որ նախ խիստ նեղ ու սուր է, ապա տակաւ առ տակաւ կընդլայնի երկու ձորերու ընթացքի համեմատութեամբ՝ ապա տակաւ առ տակաւ բարձրանալով Նրասխի և երկու ջրոց մէջ մի թերակղզի վը կազմէ վեց ժամ երկարութեամբ 4—5 ժամ լայնութեամբ:

Այս ընդարձակ տեղն զարձեւալ երկուքի կը բաժանուի մին կը տարածուի հանդէպ արեւմտահարաւ կապոյտ բերդին և միւսն արեւելահիւսիս Մատուռ բերդին, որ ըստ քրդաց կը կոչուի Թէքքէ-Բինէ Մատուռայ և կապուտայ և որք շրջապատուած են անհզօր ժայռերով և զարդարուած ի հին աւուրց մնացած եղէնի և այլ բազմատեսակ ծառերով մարդ-

1. Ալաշկերտէն Աղարախով, վարդէներով եւ կապուտով քանիցս ի կաղզուան երթելու եւս. առաջի երկու ճանապարհներուն լաւ ծանօթ, իսկ կապուտով այնչափ ոչ, այլ միայն մի մասն տեսած եւ կարգ մի վայրեր հարցնելով գրի առած եմ. որպէս եւ Թէքքէ-Բինէ եւ շատ մի վայրեր: Կարգ մի վայրեր եւս հետուից տեսած եմ. եւ ոմանց հետաքրքրութեամբ հարցնելով գրի առած եմ: